Գոհար Գասպարյան

Հայ օպերային արվեստի մեծագույն վարպետ, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մեներգչուհի, քնարակոլորատուրային սոպրանո, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի, սոցիալիստական աշխատանքի հերոս, պետական մրցանակների դափնեկիր *<<Մեսրոպ Մաշտոց>> շքանշանակիր:*

Գոհար Գասպարյանը (օրիորդական ազգանունը՝ Խաչատրյան) ծնվել է 1924թ. Կահիրեում, ուսանել է տեղի երաժշտական ակադեմիայում, եղել է. Ֆելդմանի և Վ. Կարրոյի սանը:

1940 թվականից ելույթներ է ունեցել Կահիրեում:

1948թ. հայրենադարձվել Է:

1949-ից Հայաստանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհին էր, հանդես է եկել 23 օպերաների գլխավոր դերերում: Նրա երգացանկում ավելի քան 500 ստեղծագործություն էր ներառված:

1964-ից դասավանդել է Երևանի կոնսերվատորիայում, 1973թ. ստացել է Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսորի կոչում: Գ. Գասպարյանի բազմաթիվ աշակերտներ դարձել են համաշխարհային լավագույն բեմերի մեներգիչներ: Նրա աշակերտն է եղել նաև ապագա ամուսինը՝ օպերային երգիչ, ռեժիսոր, դերասան Տիգրան Լևոնյանը:

Գոհար Գասպարյանին անվանում են <<Հայաստանի սոխակ>>:

Մահացել է 2007թ.:

www.yerevan.am